



Ամբողջ անգամ էլ հրապարակի
Ստորագրութեան տեղն է իմած
Աստի խան վարի յարկը :

Տարեկան գինն է խանի շրջ 120 .
Դուրսերէն Բաժանորդ Եղողն է
ընդ Բաժանորդ Դասի Բաժանորդ Են :

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

46

ԾԱՐՏ

Բ. ՏԱՐԻ 1862

ԹԻՒ 20

Հետեւեալ նամակը ուղղուած է մեզ տրապարուելու խնդրանք, մենք ալ սիրով կ'ընդունինք այդ առաջարկութիւնը յուսալով որ ուրիշ ընկերութիւններ սոյնէն օգուտ մը գաղելով արգիւնաւորին :

Արդոյ. խմբագիր Սիրոյ

Ձեր մէկ յօդուածէն առիթ առնելով ընկերութեանց վրայ կարճ խորհրդածութիւն մը ընելու կը համարձակիմ. և կը փափաքիմ որ ընկերութեանց վրայ սեր և համակրութիւն ունեցողներուն եթէ ոչ զգուշութեան գոնէ դատողութիւն մը ընելու նիւթ ըլլալու համար աս համառօտ յօդուածս հրատարակելու հաճիր :

Ասկէ առաջ Ազգին արդարեւ օգտակար ընկերութեան մը տարեգարձին համառօտ զեկուցումն ընելով 'ի քաջալերութիւն յիշեալ ընկերութեան գեղեցիկ տեսութիւն մը ըրած էիք. և ան առթիւ հմուտ անձի մը ընկերութեան տարեկան ժողովին մէջ խօսած մէկ ուղերձը մէջ բերած էիք : Ուղերձը հաճութեամբ կարդացի, մանաւանդ անոր մէջ իմաստ մը ինծի շատ իրաւացի թուեցաւ : Ատենապետը, յարգոյ Յ. Ոսկանեան, ընկերութեանց խիստ չափով յառաջ ելածը՝ ընկերութեանց խիստ էական մէկ պայմանը դնելով՝ անոնք ցորենահատի մը կը նմանցնէ, որն որ հարկաւ մէկ հատէ հետզհետէ աճելով այնչափ բազմացած է՝ մինչև մարդկային սերունդներ կերակրելու բաւական եղած է. և կ'ըսէ թէ « ընկերութիւնները գալելու են ոչ թէ վաղելու են » : Արդարեւ

մեծնալու և մեծամեծներ գործելու չափազանց ջանքը շատ ընկերութիւններու աւրուելուն, ինչպէս նաեւ անհատներու կործանմանը պատճառ եղած է : Ասիկա գեղեցիկ խրատ մըն է ընկերութեանց համար որ իրենց բաւականութիւնը ճանչնան : Ասիկա ընկերութեանց համար . բայց արդեօք ընկերութեանց հիմնադիրներուն, և անոնց մէջ մեծ արգիւնք և գործունէութիւն ցուցնողներուն համար ալ խրատ մը պէտք չէ . քանի որ կը տեսնենք թէ շատ անգամ ընկերութիւն մը կործանողներն անոր հիմնադիրներն են, և զանոնք ամենէն աւելի տկարացնող ու վնասեցնողները՝ անոնց մէջ կարգէ դուրս աղղեցութիւն գրաւողներն են :

Չեմ գիտեր մարդու բնածին մէկ պաշտութենէն է, թէ անկրթութենէն, և փառասիրութենէն է . քանի քանի փորձելով տեսայ որ լրագիրներուն և Ատենաբաններուն գործի մը իբրեւ հիմնադիր. և խիստ արգիւնաւոր դուրս անձինքը՝ իրենց հիմնադիր և արգիւնաւոր ըլլալու գովեստներուն ապաւինած՝ ան աստիճան տիրել ուղեցին ընկերութեանց վրայ մինչև ցրուեցին ու կործանեցին : Գործարանաւոր մարմնաց, զօրօրինակ մարդու, մարմնոյն տնտեսութեանը մէջ, հիւթ մը ուրիշ հիւթերու հաւասարութեանը մէջ որչափ օգտակար ըլլայ, եթէ յօղովելու, այսինքն չափազանց աւելնալու ըլլայ, մարմնոյն տնտեսութեանը մէջ վնասակարութիւն, կամ եղծում մը կը պատճառէ : Ընկերութիւններն ալ ո՛չ ապաքէն բարոյական մարմիններ են որոնք տնտեսութիւն մը կամ գոր-

ծողութիւն մը ունին, որն որ շատ գործող-
ներու զուգընթաց ազդեցութեամբը կը
կատարուի: Միթէ փայծաղը թոքէն նուազ
կարեւորութիւն ունի, թէեւ անկէ փոքր է
կատարած պաշտօնը, կամ ողնայարին մէկ
յօդուածն ըլնելէն պակաս հարկաւոր է մի-
թէ թոքը կամ ըզեղը մինակ կամ 'ի միասին'
ուրիշ շատ մը գործարաններու պաշտօնը
կատարելու ձեռնհաս է:

Ընկերութեան մը դադափաբը հարկաւ
մէկ մտքի մէջ կը յղանայ, և ի սկզբան հա-
ղիւքանի մը համախոհներ կ'ունենայ. բայց
ընկերութիւնն ան ատեն ընկերութի
կ'ըլլայ, երբոր մասնակիցներ ունենալու
կը սկսի: Մարդիկ որչափ չափահաս և խե-
լացի ըլլան, տակաւին տղայութենէ բան
մը ունին. գովեստներէ շուտով կ'ապակա-
նին: Ամբարտաւանութիւնը փառասի-
րութեան կը տանի. փառասիրութիւնը
իշխելու ցանկութեան, անկէ ետքը շուտով
դաւադրութիւններ կը սկսին, գժտու-
թիւնը կը սպրդի, հերձուածը կամ երկպա-
ռակութիւնը կը բաժնէ, կռիւները կը
ցրուեն: Ահա գովեստներուն խիստ սովո-
րական պտուղը:

Որչափ աղէկ կ'ընէին լրագիրներն ու
ատենաբանները, եթէ շատ բաներու մէջ,
մանաւանդ ընկերութեանց համար, մասնա-
ւորներու գովեստ տալու մէջ շուրջ չըլլա-
յին: Ընկերութիւնները քաջալերուին, լաւա-
գոյն է որ անհատներուն արժանիքը շատ
բիշ, և հարկ եղած ատենն ալ շատ համես-
տութեամբ հռչակուի, քան թէ չափէն
աւելի ողորուի:

Կոստանդնուպօլիս 3 Մարդ, 1862: ***

ԺԻՒ ՊԼԸՍ

Տես թիւ. 13

Ըս խօսքերը պատշաճից դէմքով ըսե-
լուս համար՝ մարդը սարսափեցաւ: Մի
բարկանար, սիրելիս, ըսաւ, որովհետեւ կը
ստիպես, ահա խնդիրքդ կը կատարեմ:
Ձեզի նման մարդոց հետ հետեորական
ցեղերով խօսիլն բնաւ օգուտ չընէր. աս ը-
սելով պարեգօտը վեր առաւ, և ուղտու
մորթէ շինուած խոշոր քսակ մը հանելով
առջիս նետեց: Հիմա կրնաս ճամբադ յա-

ռաջ տանել ըսելուս չմնաց, կրօնաւորը
ջորւոյն կուշտը սկսաւ աքացել: Ես չէի
կարծեր թէ ջորի մը իմ մօրեղբօրս ջորիէն
աղէկ կրնար ըլլալ. բայց զարմանքով կը
տեսնէի որ ջորին բաւական արագ կը քա-
լէր: Արեղան իր ճամբան շարունակելու
վրայ ըլլայ, ես ձիէն վար իջնելով՝ քսակն
առի, որ բաւական ծանր էր: Յետոյ վե-
րստին ձիուն վրայ հեծնալով անտառը մը-
տայ ու շուտով ընկերներուս հասայ, որոնք
անհամբերութեամբ ինծի կը սպասէին, և
մեծ դժուարութեամբ յաղթութիւն մը
գլուխ տարածի պէս, ինծի բարեմաղթու-
թիւններ ընելու պատրաստ էին: Հաղիւ
թէ ձիէն իջնելու ժամանակ ունեցայ, ա-
մենը մեկէն իս գրկելու եկան: Քաջ եղիւր,
Ժիւ Պլաս, ըսաւ Բոլանտոյ. հրաշալի գործ
տեսար. քու բոլոր արշաւանացդ ատենը՝
եւ ակնկառոյց եղած քեզի կը նայէի. քու
կեցուածքդ կը դիտէի. հիմա աս նախա-
գուշակութիւնը կ'ընեմ որ դուն քաջ աւա-
զակապետ մը պիտի ըլլաս, և կամես բնաւ
աւազակութեան արհեստէն չեմ հասկնար:
Բոլանտոյին տեղապահն ու բոլոր գողերը
նախադասին աս գուշակութեանը ձայնա-
կից եղան, և ըսին թէ Այո, Ժիւ Պլաս օ-
րին մէկը նշանաւոր աւազակապետ մը պիտի
ըլլայ: Ես անոնց իմ վրաս ունեցած աստիկ
բարձր համարմանը համար շնորհա-
կալ ըլլալէ ետքը՝ խօսք տուի թէ անոնց
գուշակութիւնը սուտ չհանելու համար
ամեն ջանք պիտի ընեմ:

Իս արժանաւորութենէս աւելի գովելէ
ետքը՝ հիմա՝ ըսին գողերը, քսակը բանա-
լու ժամանակ է: Տեսնե՛ք, ըսաւ մէկը
Յարգելին քսակին մէջ ինչ ունի: Քսակն,
ըսաւ ուրիշ մէկը, բաւական բան պարու-
նակած ըլլալու է. քանզի աս բարի հայ-
րերն իբրեւ պանդուխտ ճամբայ չեն ել-
լեր: Աս խօսքերն եղած ատեն՝ Բոլանտոյ
գողերուն գլխաւորը, քսակին կապը քա-
կեց, բերանը բացաւ ու մէջէն հանածն
ուրիշ բան չէր եթէ ոչ ափ մը կամ երկու
պղնձէ միտալներ, որոնց մէջ քանի մը Գառն
Ասպոն-ճոյ ու քանի մը հատ ալ հանդերձ կը
գտնուէին: Ասանկ նոր տեսակ գողօն մը
տեսնելով բոլոր գողերը քրքիչ բարձին:
Հիմա, ըսաւ տեղապահը, մենք Ժիւ Պլա-

սին կրկին շնորհակալութիւն ընելու պարտական ենք. ահա Պարոն Ժիլ Պլաս իր առջի աւարովը մեզին հոգեւոր բաներ կը բերէ: Տեղապահն ասիկա հեգնութեամբ ըսաւ. անոր վրայ ուրիշներն ալ սկսան կատակ ընել. և մանաւանդ արեղայութենէ դարձող գողը հոգեւոր և սրբազան նիւթեր ըսկսաւ ծաղրել: Վերջապէս միտաներուն պատճառաւ եղած խօսակցութեան մէջ այնպիսի խօսքեր սպրդեցին զորոնք պատմել չեմ համարձակիր. բայց աս դիպուածին մէջ անոնց մէջ տիրող ապականութիւն աղէկ նշմարեցի. անոր համար ալ բնաւ չըծիծաղեցայ: Ճշմարիտ է որ ծաղրաբանութեանց մէկ մասն ալ իմ վրաս ըլլալուն համար՝ տխրութիւնն ալ չէր թողուր որ ծիծաղիմ: Ամեն մէկը մէյմէկ կ'ըսէր կ'ըսէր. և 'ի վերջոյ Ռոլանտոյ սակերպով խօսեցաւ. Ժիլ Պլաս, իբրեւ բարեկամ քեզի սա խրատը կուտամ. կրօնաւորաց հետ մի խաղար. դուն տակաւին անոնց համար չես. անոնք քան զքեզ շատ աւելի խորամանկ ու նուրբ մարդիկ են:

ԳԼ. Թ.

Աս դիպուածէն ետքը պատահած ահա-որ դէպքը:

Օրուան մեծ մասն անտառին մէջ անցուցինք, բայց ճամբուն վրայ ուրիշ ճամբորդ մը չերեցաւ որ կրօնաւորին տեղ մեզի հատուցում մը ըլլար: Վերջապէս որոշեցինք որ ան ծաղրալի դիպուածով մեր անօրէն աշաւանքին վերջ տալով՝ գետնափորը դառնանք: Մինչդեռ ան դէպքին վրայ կը խօսէինք, հեռուէն նշմարեցինք կառք մը որ չորս քորիներէ լծուած էր: Կառքը դէպ 'ի մեզ խիստ առաջ կուգար, ու չորս սպառազէն հեծեալ կառքին քովերէն կ'ընթանային, և կ'երևէր թէ պատրաստ էին մեզի հետ կռուելու, եթէ յարձակում մը ընելու յանդգնէինք: Ռոլանտոյ խիղիւն գունտը կայնեցուց, շուտով խորհուրդ եղաւ և որոշուեցաւ որ յարձակում ըլլայ: Իր ուղած կերպովը շուտով ճակատ կազմեց, և ռազմ գործելով սկսանք կառաց վրայ արշաւել: Ետքից մը առաջ լսած գովեստներս բոլորովին մոռցայ, սաստիկ դող մը ինձ առաւ, և սկսայ պաղ պաղ քրտինք թափել,

այնպէս որ աս սարսափն ինծի չար գուշակութիւն մը թուեցաւ. Գեղաստութեամբ ալ առաջին կարգին մէջ էի. ռոլանտոյին ու տեղապահին մէջ տեղը, որոնք ին դիտմամբ գնդին ճակատը դրին որ մէկէն կրակին սովորիմ: Ռոլանտոյ իս յետին տագնապի մէջ տեսնելով՝ խոժոռ հայեցուածով մը ինծի նայեցաւ, ահաւոր ձայնով ըսելով. Լսէ, Ժիլ Պլաս, նայէ որ պարտքդ կատարես. ահա կանխելով կ'ըսեմ քեզի որ, եթէ 'ի փախուստ մտաբերես, մէկ գնդակով իսկոյն ըզեզդ կը ջարդեմ: Ասանկ ազդարարութեան մը ստիպուած էի անսալ, քանզի գիտէի թէ ըրած սպառնալիքը կը կատարէ, ուստի և ուրիշ բան չէր մնար ինծի, եթէ ոչ իս Աստուծոյ յանձնել, քանզի երկու կողմանէ ալ մահուան վտանգը մօտալուտ էր:

Մինչ այս մինչ այն, կառքն ու հեծեալներն արագ արագ կը մերձենային: Տակաւին շատ մօտ չէին, երբ մեզ հեռուէն տեսնելով հասկցան թէ ինչպիսի մարդիկ ենք, և մեր դիրքէն մեր դիտաւորութիւնը գուշակելով՝ ասպարէզ մը հեռուն կառքն ու ձիանքը կայնեցուցին: Անոնք ալ մեզի պէս հրացաններով և ատրճանակներով վառուած՝ երբոր մեզի դէմ ընելու կը պատրաստուէին, գեղեցիկ հասակով և շքեղ հագուած երիտասարդ մը կառքէն դուրս ելլելով նժուգի մը վրայ հեծաւ զոր հեծեալներուն մէկը սանձէն բռնած կը բերէր: Չիուն վրայ հեծնելուն պէս՝ մէկէն գնթին գլուխն անցաւ: Ասոր ալ գէնքերն էին սուր մը և երկու ատրճանակ: Թէև չորս հոգի էին, որ ինք հոգւոյ դէմ պիտի կռուէին, քանզի կառապանն իր տեղը մնաց, այնպէս դիմադրաւ մեր վրայ սկսան խոյանալ որ իմ սարսափս կրկին եղաւ: Բոլոր մարմնովս կը դողայի, սակայն և այնպէս հրազէններս լեցուցած՝ կրակ տալու պատրաստ կը կենայի. բայց ճշմարիտ ըսելով՝ երբոր հրազէնները պարպուելու սկսան, ես աչուրներս գոցելով և գլուխս մէկդի դարձնելով այնպէս կրակ կուտայի. այսպէս կոյր զկուրայն նետելուս համար՝ խիղճս ինչի տանջէր թէ մարդասպան եղայ:

Աս պատերազմը մանրամասն չեմ կրնար պատմել. քանզի, թէպէտ ներկայ էի,

բան մը չտեսայ, և սաստիկ վախէն ան աստիճան չփոխած ու այլայլէ եղած էր, որ իս պատող սարսափն անգամ չէր զգար: Բոլոր գիտցածս սա է որ հրագէշներու սաստիկ ու շարունակ պայթիւնէ մը ետքը՝ ընկերներու մեծածայն, Յալի-ի-ն յալի-ի-ն աղաղակելը լսեցի: Աս ձայնը իսկոյն ամեն ահ և երկիւղ փոքրատեց, և տեսայ որ ճակատաբեղոյն վրայ ան չորս հեծեալները թաւալգլոր ինկնւո՞ւ մեռած էին: Մեր կողմէն մինակ մէկ հոգի ինկած էր, արեւդայութենէ դարձող պատանին. այսպէս անգլամն ըրած ուրացութեանն ու հանդերձներուն վրայ ըրած չար կատակներուն արժանաւոր պատիժն առաւ: Մեր հեծեալներէն ուրիշ մէկուն աջ ծունկին գնդակ մը պատահած էր. տեղապահն ալ վէրք մը առած էր, բայց խիստ թեթեւ. հարուածն հազիւ թէ մորթը քերած էր:

Բոլանտոյ նախ և առաջ կառքին դուռը վազեց: Կառքին մէջ նստած էր քսան չորս կամքսան և հինգ տարեկան տիկին մը, որ թէև աս աղէտալի դիպուածէն մահու թախծութեան մէջ ինկած, տակաւին անհամեմատ գեղեցիկ էր: Կռուոյն ժամանակը նուազած էր, ու նուազումը տակաւին կը տեւէր: Բոլանտոյ տիկնոջը քով զբաղած ատենը՝ մենք ասդին աւարին հետ էինք: Նախ սպանուած ասպետներուն ձիերը բռնելու աշխատեցանք. քանզի ձիերը հրագէշներուն ձայնէն զարհուրած, իրենց հեծեալները կորսնցնելէ ետքը, մէյմէկ դիհեռացած էին: Չորիները բնաւ իրենց տեղէն չարժած չէին. թէև կառապանը կռուոյն ատենը կառքը թողուցած ու փախած էր: Չորիները քակելով կառքին առջևի ու ետևի դին կապուած արկղերն անոնց վրայ բռնաւորեցինք: Աս ընելէ ետքը՝ առինք արկղինը որ տակաւին ուշաբերած չէր, և և գողերէն ամենէն հուժկու և քաջ սպառազէն մէկուն բազկացը վրայ դնելով՝ ձի հեծցուցինք. յետոյ կառքն ու սպանուածները մերկ և կողոպուտ արքունի ճամբուն վրայ ձգելով տիկինը, Չորիներն ու ձիերը հետ առինք ու գնացինք:

ԳԼ . Ը .

Թէ Գալիլէ Գիլիմը Կեփ ինչպէս իւր փառսին Ժիւ Պլատին խորհած հարսը . և թէ աս Տեփ խորհուրդը ինչ էլ աստեղան

Արգէն կէս գիշերը ժամ մը տառաջ անցած էր երբոր գետնափորն հասանք: Վախ ձիերն ախոռը տարինք. և սե ծերունին, գողերուն ձիադարմանը, բանի մը օրէհետէ հիւանտ ըլլալուն համար՝ անձամբ մեր կենդանիները մտուրը կապելու և դարմանելու ստիպուեցանք: Ծերուն հիւանդութիւնն էր յօգացաւ մը և դնդերացաւ այնպէս սաստիկ որ բոլոր անդամներովը կաշկանդուած էր: Լեզուէն ուրիշ աղաւտ տեղ մը չունէր, ան ալ թշուառականին դարհուրելի յիշոցներով անհամբերութիւնը յայտնելէ ուրիշ բանի չէր ժառայէր: Թող տալով որ անիկա իր նշովներն ու հայհոյութիւններն ընէ, մենք խոհանոցը գացինք, ուր մեր բոլոր ջանքերն եղան դարման ընել տիկնոջը որ մահուան ստուերներովը պաշարուած կ'երեւէր: Անիկա իր նուազումէն հանելու համար ամեն կարեքն ինքամբ տանելէ ետքը՝ վերջապէս ուրախութեամբ տեսանք որ սթափեցաւ. բայց ուշաբերելով՝ երբ զինք անծանօթ մարդոց գիրկը տեսաւ, իր թշուառութիւնը զգաց ու ըսկաւ դողալ: Ինչ սարսափ որ կսկիծն ու յուսահատութիւնը միանգամայն կրնան ունենալ՝ Լիովին նկարուած կ'երեւէր աս խեղճին աշուքներուն մէջ, զորոնք իրեն ի մօտոյ ըլլալու նախատանաց դէմ որպէս թէ դանդաւտ ընելու համար՝ իսկոյն երկինք վերցուց. յետոյ մտքին մէջ պտտող անսոսկալի պատկերներէն յաղթուելով, նորէն թալացեալ ինկաւ, արտեանունը դարձեալ գոցուեցան, ու գողերը կարծեցին թէ մահն իրենցմէ աս օրը յափշտակելու եկած է:

Հարոնալիէ:

ՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՊԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ
Ա . ՃԵՎԱԶԻՐՃԵԱՆ